Տեղ-տեղ խրճիթների դռների առջեւ դուրս էին բերել եզները, լծում էին արօրը, որ տանեն արտերը հերկելու: Տեղ-տեղ հանդիպում էինք մշակների, որ, մանգաղները թեւքի տակ դրած, դիմում էին դէպի դաշտը: Գործը եւ աշխատասէր գործաւորը զարթել էին միասին:

Եկեղեցու դռանը մենք գտանք մի խումբ ծերունիներ, որոնք նստած էին գերեզմանաքարերի վրայ, ջերմեռանդութեամբ սպասում էին, մինչեւ դռները բաց անեն:

— Ես պէտք է գնամ պարոն բժշկապետի մօտ, — ասացի տէր հօրը, — յետոյ կը գամ ժամ:

— Գնացէք, որդի, — ասաց նա, ցոյց տալով վարժապետի սենեակները:

Լուսամուտների թանձր վարագոյրները ցած էին թողած. ես կարծեցի, քնած կը լինեն, բայց ներսից աղօտ լոյս էր երեւում: Ես մօտեցայ նախասենեակի դռանը, սկսեցի բախել: Աւելի սատիկ, քան դռան տախտակները, բաբախում էր իմ սիրտը: Ինչպէ՞ս պէտք է հանդիպէի նրան, ինչե՞ր պէտք է ասէի նրան: Ճանապարհին, տէր հօր հետ գալու ժամանակ իմ գլխում արդէն պատրաստել էի մի ամբողջ ճառ, բոլորը պէտք է կարդայի նրան, որ տեսնէր, որ ես այլեւս առաջոայ տգէտ Ֆարհատը չեմ, որ ես բաւական զարգացել եմ: Այդ կուրախացնէր նրան: Դուռը բացոեցաւ, ես դողդողալով ներս մտայ, որպէս դասը լաւ չսերտած աշակերտը մտնում է դասատունը: Նախասենեակում նա գրկեց ինձ: Ես մի բառ անգամ չգտայ նրան ասելու, բոլորը, ինչ որ կազմոել էր իմ գլխում, շփոթոեցաւ, մոռացոեցաւ սրտիս սաստիկ յուզմունքից: Ես միայն փաթաթոեցայ նրա պարանոցին:

Երբ մտանք սենեակը, Ասլանը լուռ նստած էր գրասեղանի մօտ, որի վրայ վառւում էին երկու մոմեր եւ լուսաւորում էին այնտեղ թափոած թղթերը: Երեւում էր, որ դրանք եւս, ինձ նման, ամբողջ գիշերը չէին քնել: Ես պատմեցի, թէ ինչպէս անցկացրի իմ գիշերը:

— Այդ ես երեւակայում եմ, — ասաց վարժապետը ծիծաղելով, — տէր հայրը իր աղօթքներով հանգստութիւն չէր տայ քեզ: Նա թէեւ մոլեռանդ է, բայց շատ լաւ մարդ է:

Նա բռնեց իմ ձեռքից, նստեցրեց իր մօտ, մի փոքրիկ հայկական թախտի վրայ, որ ծածկոած էր գեղեցիկ գորգով, որը տեղային ձեռագործութեան արդիւնք էր: Նայում էր իմ երեսին, նայում էր իմ հասակին եւ երկար իմ ձեռքը բաց չէր թողնում իր ափի միջից: Կարծես նոր էր տեսնում ինձ, եւ աշխատում էր միանգամից լրացնել երկար ժամանակների կարօտութիւնը: